

զիպտոսի, ինքը եւ իր որդին իրմէ վերջ, յիտուն տարի Եզիպտոսի Ծաթիմեան խալիֆայութեան նեցուկները եղան իբր վէզիրներ, միահեծան եւ ազդեցիկ: Անոնք ոչ միայն հայոց եւ քրիստոնէից մօտ էին, այլ եւ իրենց բանակներուն կորիզը եւ պաշտականներուն ու թիկնապահներուն կարեւորագոյն մասը քրիստոնեայ հայեր էին, Սիւրբաշէն եւ Միջպետքէն բերուած իբր վարձկաններ: Պատրի շինարարութեան համար կը վկայուի որ Ուսհայեցի հայ ճարտարապետներ գործածուած էին: Գահիրէի ճիւղուշի դամբարան-մզկիթը իր քանդակներուն եւ դարդարանքներուն արուեստով բոլորովին կը տարբերի մինչեւ այն ատենուան եզիպտական մզկիթներուն ոճէն: Միհրապին հիւսիսեակար եւ երկրաչափական արձանեակներով քանդակները հայունակ են, եւ անտարակոյս «Սելճուք»եան արուեստ, որուն սակայն զլիսաւոր վարպետները եւ արտադրողները աներկրայելի կերպով հայեր էին ամբողջ Մերձաւոր Արեւելքի մէջ:

Ուրեմն այն մեծ հայ գաղութը որ Եզիպտոս կը դանուէր, որուն կոթնած հայ մեծանուն եւ բազմարդին Եզիպտական վէզիրներ, ինչպէս Պատր Ալ Կամալի, որդին Ալ Աֆտալ Շահնշահ, ասոր որդին Ապու Ալի Ահմէտ, ասոնց Եանիս «զերին», Թայպլը Պին Բուզղիք, ասոր որդին էլ Ատիլ Բուզղիք, Թաճ Ատ-Տաւլա Պէհրամ եւ Եասալ, որ Պահլաւունի վահրամն ու իր եզրայրը Վասակն է, որոնք նոյնիսկ երեսանց մահմետականանալու կարիք չտեսան, մինչ վարդան մը (Պատրէն ալ առաջ) կը յիշուի մահմետականացած վէզիր Եզիպտոսի, սակայն զարմանալի կերպով կը պահէ հայունակ եւ հերոսական իր անունը:

Եղած են ուրիշ մեծանուն պաշտօնատարներ ալ, ինչպէս էլ Ատիլ Բուզղիքի որդի Զատիկ, Սաչակրաց Ժամանակ եզիպտական նաւատորմիդին մեծանուն հրամանատար Լուլուս, եւ ուրիշներ, որոնք ոչ միայն քաղաքական, ղինուորական եւ վարչական կեանքի մէջ աչքաառու եղած են, այլ նաեւ շինարարական եւ նոյնիսկ բանաստեղծական մարդերուն մէջ փայլած են:

Բնական է այսքան երկար եւ շարունակական «հայեցի» վարչութիւն մը իր հետ բերէր նաեւ «հայունակ» մշակոյթ մը կամ գոնէ ասոր շատ մեծ ազդեցութիւնը: Հայերը, որոնք այնքան գնահատուած էին Արարներէն իրենց հիսուսածեղէններուն եւ ներկերուն համար, ինչպէս նաեւ գորգերուն համար անտարակոյս կարեւոր բաժին ունէին Ծուսթաթի եւ Գահիրէի մանարաններուն, ներկարաններուն եւ ոստայններուն արտադրութեանց մէջ: Մեզի հասած հնագոյն գորգերու պատատիկներ, Գահիրէի եւ եզիպտական ուրիշ տեղերու պեղումներէն հանուած, որոչ տուեալներ ունին մեզ համոզելու որ հայ դժաձեւեր սովորական էին անոնց մէջ:

Ոչ ալ Պագտատի խալիֆաները աւելի վար կը մնային Եզիպտոսի իրենց մրցակիցներէն: Ապուլ Ֆարաճ կը վկայէ որ Ալ Մուզթատիլ